Հարցաթերթ
Աշխարհագրություն առարկայի օլիմպիադայի հանրապետական փուլի
2023-2024 ուս. տարի
/տևողությունը – 120 րոպե/
9 – րդ դասարան

1. Պնդումներից յուրաքանչյուրի համար նշել՝ ճիշտ է, թե՝ սխալ 2միավոր

ա. ՀՀ տարածքում օրացուցային եղանակները համընկնում են կլիմայական եղանակներին միայն կլիմայի չափավոր ցամաքային վերընթաց տիպում

բ. Խիստ ցուրտ լեռնային կլիմայի տիպը չի հանդիպում Արմավիրի, Լոռու և Տավուշի մարզերում

գ. Չոր խիստ ցամաքային կլիմայի տիպը հանդիպում է Արարատյան դաշտի, Արփայի հովտի, Մեղրու և Դեբեդի կիրճի տարածքում

դ. Չափավոր շոգ վերընթաց կլիմայական տիպը բնորոշ է միայն երկրի հյուսիս-արևելքին, հարավ-արևելքին և Հրազդանի կիրճին

ե. Աշխարհում արտադրվող շաքարի մեծ մասի հումքը շաքարի ճակնդեղն է

զ. Բուսական յուղի արտադրության հիմնական մասը ստացվում է արևածաղկից

է. Աշխարհում արտադրվող ալյուրի մեծ մասը ստացվում է ցորենից

ը. Կովի կաթի արտադրության համաշխարհային առաջատար երկիրը Բրազիլիան է:

2. Ի՞նչ են նշանակում եզրույթներից յուրաքանչյուրը 1միավոր

ա. աստիճանացանց բ. էքսկլավ

3. Նկարագրով որոշել պետությունը 1միավոր

Այս գաճաճ երկիրը հանրապետություն է հռչակվել Հայաստանում քրիստոնեության ընդունման տարում: Այն Եվրախորհրդի անդամ երկրների շարքում ամենափոքր բնակչությունն ունի: Պետության ամենամեծ քաղաքը մայրաքաղաքը չէ:

4. Ինչպե՞ս են կոչվում.

ա. Գետի նախկին հունի այն հատվածը, որը պարբերաբար ծածկվում է ջրով 1միավոր

բ. Անապատներում քամու ազդեցությամբ առաջացող կիսալուսնաձև ավազաթմբերը 1միավոր

5. Խնդիրներ

ա. Տվյալ երկրի գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում եմ 2մլն հա, որից 50% արոտավայր է, 25%՝ վարելահող, 10%՝ խոտհարք, 5%՝ բազմամյա տնկարկ և 10%՝ այլ հողեր: Խաղողի այգիները զբաղեցնում են համապատասխան հողատեսքի 50% և խաղողի բերքատվությունը 10տ/հա է: Որքա՞ն խաղողի բերք ակնկալել այդ երկրում 1 տարում 1միավոր

բ. Տվյալ երկրում առկա է 30 000կմ ավտոճանապարհ, 10 000կմ երկաթգիծ, 10 000կմ նավարկելի ջրանցք և 20 000կմ խողովակաշար: Որքա՞ն է երկրի ցամաքային ուղիների խտությունը, եթե տարածքը 60 հզ. կմ^2 1միավոր

6. Ելնելով ՄԱԿ-ի պաշտոնական տեղեկագրի տվյալներից՝ գծեք Աֆրիկայի և Ասիայի բնակչության թվի շարժի կորերը (1միավոր) և պատասխանեք հարցերին:

Տարեթիվ	1950թ.	1960թ.	1970թ.	1980թ.	1990թ.	2000թ.	2010թ.	2020թ.
	Բնակչություն (մլն մարդ)							
Աֆրիկա	228	284	365	482	638	819	1055	1361
Ասիա	1379	1700	2146	2636	3211	3736	4221	4664

ա. Երկու տարածաշրջաններից որո՞ւմ է բնակչության հարաբերական աճը եղել ավելի բարձր 1950-2020թթ. ժամանակահատվածում 1միավոր

բ. Նշեք այդ տարածաշրջանում նման բարձր հավելաճի չորս հիմնական պատճառ 1միավոր

7. Դասավորել ՀՀ նշված մարզերը ըստ արդյունաբերական արտադրանքի ծավալի ունեցած կշռի աճող հաջորդականության. Սյունիք, Տավուշ, Արարատ, Շիրակ 1միավոր

8. Կարճ պատասխանով հարցեր: Յուրաքանչյուրին տրվում է գումարային 1 միավոր

ա. Երկարամյա դիտարկումների համաձայն՝ ո՞րն է ամենասակավ տեղումներով եղանակը Հայաստանում (0.5միավոր) և ո՞ր օդային զանգվածներն են տիրապետող տարվա այդ եղանակին (0.5միավոր):

բ. Վերջին տասնամյակներին փոփոխության ի՞նչ երկու միտում է դիտվում Արկտիկայի սառցապատման առնչությամբ (0.5միավոր): Նշել ծովային տրանսպորտի համար այդ միտումի մեկ դրական և մեկ բացասական հետևանք (0.5միավոր):

9. Դիտարկեք միտումը և պատասխանեք հարցերին

Մեկ կնոջ հաշվով ծնված երեխաների թվաքանակը 1950-2022թթ. ժամանակահատվածում



ա. Համաձայն գծագրում ներկայացված տվյալների՝ երկրներից որու՞մ է իրականացվել կանաչ հեղափոխություն (0.5միավոր) և ե՞րբ (0.5միավոր)

բ. Երկրներից որու՞մ է կիրառված ժողովրդագրական քաղաքականությունը հանգեցրել մեկ կնոջ հաշվով ծնված երեխաների ամենամեծ բացարձակ անկմանը 0.5միավոր

գ. Ո՞ր երկրում է առաջինը գրանցվել դրական բնական աճի համար անհրաժեշտ նվազագույն ծնելիության մակարդակից ցածր ծնելիություն (0.25 միավոր) և ո՞ր տասնամյակում (0.25միավոր)

10. Պատասխանեք հարցերին՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորումները

ա. Ե՞րբ Հայաստանում սկսվեց երկաթբետոնե կոնստրուկցիաների արտադրության վերելքը ԽՍՀՄ տարիներին և ինչո՞վ էր դա պայմանավորված 1միավոր

բ. Կանադական Քվեբեկ քաղաքի մերձակայքում Սուրբ Լավրենտիոս գետի ջրի աղիությունը երբեմն աճում է մինչև 17‰: Ինչու՞ 1միավոր

11. Ներկայացված բնութագրերը համապատասխանեցնել քարտեզում 1-10 թվերով նշված օբյեկտներից ութին (օր.՝ Ա-1): Յուրաքանչյուր ճիշտ պատասխանը՝ 0.25միավոր

Ա. Այս գետը հիմնականում հոսում է չորային տարածքներով և իր վտակից ավելի կարճ է:

Բ. Այս գետը մի հատվածում ավելի շատ քանդում է իր աջ ափերը, մյուս հատվածում՝ ձախ ափերը, ապա՝ դարձյալ աջ ափերը:

Գ. Այս գետի ջրերում բնակվում է վարդագույն դելֆինը և դիտվում է պորորոկա երևույթը

Դ. Այս գետի վրա է կառուցված աշխարհի ամենահզոր էլեկտրակայանը

Ե. Այս գետի տեղափոխած լյոսերի շնորհիվ իր անվանումն է ստացել այն ծովը, ուր նա թափվում է

Զ. Այս գետի ավազանում է աշխարհի ամենաբարձր ջրվեժը

Է. Այս գետի տեղափոխած գետաբերուկները այնքան շատ են, որ դրանց կուտակման արդյունքում տվյալ երկրի տարածքը ընդարձակվում է գետաբերանի հատվածում՝ հարակից ծոցի հաշվին

Ը. Այս գետը ամենաերկարն է իր մայրցամաքում, սակայն ամենաջրառատը չէ:



Առարկայական հանձնաժողովի նախագահ՝ Վ. Ասատրյան